ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

27.02.2020թ. թիվ 20-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 06-019-071-004 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 11 փողոց, թիվ 34 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

04.03.2020թ. թիվ 21-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 06-019-041-025 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 19 փողոց, 15 նրբանցք, թիվ 9 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

Ձև-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» մարտի 2020 թվականի N 22-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Արջուտ համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Արջուտ համայնքի.

1) խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

04.03.2020թ. թիվ 23-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածին, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի թիվ 01-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ՝

Բավարարել համայնքի հետևյալ բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն.

1.Բաղիյան Սիմոն – 10 000 դրամ, երեխայի ծննդյան գումար
2.Հակոբյան Նունե – 50 000 դրամ, սոց. օգնություն
3.Ռիլիխանյան Արմեն – 30 000 դրամ, զին. ծառ. վերադարձած
4.Ռիլիխանյան Արնիկ – 50 000 դրամ, սոց. օգնություն
5.Ղանադյան Ամալյա – 40 000 դրամ, սոց. օգնություն
6.Շահնազարյան Մարիամ – 50 000 դրամ, սոց. օգնություն

Ընդամենը – 230 000 դրամ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**

**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» մարտի 2020 թվականի N 24-Ա

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արջուտ համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09.03.2020թ. թիվ 25-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Վարոսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 05092018-06-0018 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՏԻՄ մասին ՀՀ օրենքով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն օրենքի 8-22 հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Որոշում եմ՝

1.Արջուտ համայնքում գտնվող և Էդգար Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.2868 հա հողամասի /ծածկագիր՝ 06-019-0015-0006/ վրա կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում չգտնվող, անվտանգության գոտիներում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 2020 թվականին կառուցված 375.44 քմ բնակելի տան /375.44 x 550դ = 206500դ/ և 14.52 քմ բաց պատշգամբի /14.52 x 550դ = 7990 դ/ նկատմամբ ճանաչել Էդգար Վարոսյանի /ծնվ.1982 թ/ սեփականության իրավունքը և օրինականացման համար գանձել 214490 /երկու հարյուր տասնչորս հազար չորս հարյուր իննսուն/ ՀՀ դրամ գումար:
2,Սահմանված վճարները 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3,Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:
4.ՈՒժը կորցրած ճանաչել Արջուտ համայնքի ղեկավարի 20.02.2020 թվականի թիվ 16-Ա որոշումը :

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՄԱՐՏԻ 2020թվականի N 26-Ա

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում եմ՝

Համայնքի 2020 թվականի բյուջեի բաժին 01, խումբ 01, դաս 1, 4239 հոդվածով նախատեսված միջոցներից 30 000 դրամ 1-ին եռամսյակից տեղափոխել 3-րդ եռամսյակ, և 4267 հոդվածով նախատեսված միջոցներից 30 000 դրամ 3-րդ եռամսյակից տեղափոխել 1-ին եռամսյակ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝** **ՍԱՅԱԴ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**